Կոնֆլիկտային խոսույթի կայացման փիլիսոփայական բնութագիրը և լուծման որոշակի նախատիպերը

Հարությունյան Անի

Հանգուցային բառեր. *բախում, քաղաքացիական հասարակություն, բնական վիճակ, ազատություն, թշնամանք, հասարակական դաշինք, իշխանություն*

Քաղաքակրթության ամբողջ զարգացումը կառուցված է բախման (կոնֆլիկտի) վրա. մարդը զարգացում է ապրել բախումնային փոխազդեցության մեջ: Բախման ի հայտ գալուն պես բանական էակը սկսում է փնտրել նոր լուծում, նոր ճանապարհ, որի շնորհիվ ունենում է այն, ինչը չուներ մինչհանրային ժամանակի տվյալ դրվագը: Անծանոթ նորն իր հետ բերում է նոր բախում, որը ևս լուծում է պահանջում, և որի համար կրկին պետք է փնտրել, գտնել նոր ճանապարհ, որը ևս մարդուն մղում է դեպի առաջ: Ամեն մի բախման հետ մարդը դառնում է ավելին, քան կար՝ վերափոխվելով կա՛մ մասնակիորեն, կա՛մ ամբողջապես: Բախումնային խոսույթը մեր էմպիրիկ իրականությունն է, որն իմաստավորման կարիք ունի: Մարդու բնութենական «անփակագիծ» վերլուծությունից հետո չենք կարող ընդունել, թե մենք պետք է հանձնվենք՝ պարտվելով բնական հարձակողականությանը կամ «մեր բնությանը». սա կլիներ անհույս ու ոչ մի տեղ չտանող ճանապարհ: Լավատեսական մի մոտեցման մեջ մեզ առաջարկվում է երկվություն. «....կա՛մ սեփական բնավորության արմատական փոփոխություն, կա՛մ անվերջ պատերազմներ»[1]: Այս կերպ նետելով փրկության օղակ սեփական հարձակողականությանն ու հակասականության մեջ խորտակվող մարդուն՝ նկատենք, որ բախումնային խոսույթում յուրաքանչյուր մարդուն տրված է սեփական ներգրավվածության նվազ(եց)ման հնարավորությունը: Բանական էակը, լինելով կենդանական աշխարհի կատարյալ ստեղծագործությունը, սեփական

[1] Фромм Э., Величие и ограниченность теории Фрейда. - М.: ООО «Фирма «Издательство АСТ», 2000, էջք 327-328:

կյանքի կառուցման գործում ունի ոչ միայն թաքնված զենքեր, այլև տեսանելի մեկը՝ խելքը, որը կարող է գործուն դերակատարում ունենալ արտաքին աշխարհում իր տիրոջը սպառնացող կամայական, բայց իր ծավալային ընդգրկողականությամբ՝ հանրային բախման հետ առճակատվելու համար:

Հանրային բնույթ ունեցող բախումների սկզբնապատճառը մարդկանց տարաբնույթ ծագումնաբանությունն է, նաև տարազան միջավայրը. մարդը պահպանում է իր հանրույթից բաշխված մտակեցվածքը: Այլոց հետ մարդու գոյության ընթացքը, ի թիվս այլ ակնհայտ գործոնների, մենք ըմբռնում ենք իբրև նրան վերագրվող կայացված որոշումների համայնապատկերում (անկախ նրանից՝ դրդիչների բնույթն արտաքի՞ն է, թե ներքին): Սակայն դրանց հենքում կան մշակութային բովանդակություն ունեցող ու միաժամանակ չգիտակցված կանոններ կամ կաղապարներ, որոնք կանխատրվում են հանրային այն իրականությունից, որտեղ գոյապահպանվում է մարդն իր էթնիկ, ընտանեկան պատկանելությամբ:

Բախումնային խոսույթի գոյավորման ելակետային մոտեցումների մասին

Փիլիսոփայության պատմության ծավալուն ու բովանդակ էջերում բախումնային խոսույթի թեման, այսինքն՝ բախման ըմբռնումը՝ որպես սուբյեկտային փոխազդեցության կաղապար կամ արժեքային, նորմատիվ հակադրություններ ունեցող «հանրային գործունեության հավանական կամ իրական սուբյեկտների հարաբերությունների ձև...»[2], հաճախ զուգորդվել է տարաբնույթ հիմքերով, որոնցից հենքայինը, մեր պատկերացմամբ, կարող է դիտարկվել մարդկանց բնութենական, իրավական, հանրային հավասարության ու անհավասարության հարցախնդրի վերհանման համատեքստը:

Ելնելով այն հանգամանքից, որ բախումնաստեղծ խոսույթը,

---

[2] Здравомыслов А. Г. Социология конфликта. Исследование конфликта на макроуровне. Теоретические предпосылки. Н. Новгород: Волго-Вятский кадровый центр, 1994, էջ 32:

ինչպես և խոսույթի մնացյալ տարատեսակները[3], անպայմանորեն ենթադրում է միջմարդկային հաղորդակցություն, տեղին է ուրվագծել այն միջավայրի մասին, որի տեսակը կարող է ազդեցություն ունենալ ինչպես ձևավորվող հարաբերությունների բնույթի, այնպես էլ դրանց որակի վրա: Ըստ այդմ՝ մենք կարող ենք տարորոշել հիշյալ խոսույթի կազմավորման, զարգացման հնարավոր երկու սցենար, որոնցից մեկը նախապետական մակարդակն է կամ հասարակական կարգի ձևավորմանը նախորդած, վարքի կազմակերպման ինքնաբուխ ժամանակաշրջանը, իսկ մյուսը՝ պետական, քաղաքական մակարդակում մարդկային հարաբերությունների ստիպողական կարգավորումը:

Հիմք ընդունելով բախման իմաստաբանության մեջ առկա հակադրության գաղափարի պարտադիր առկայությունը, բախումնաստեղծ խոսույթի փիլիսոփայական անդրադարձի մեկնարկը փորձենք կատարել «մարդը մարդուն գայլ է»[4] սկզբունքի իմաստավորմամբ:

Այս մտքի շուրջ իր տեսության առաջին մասը կառուցած հասարակական դաշինքի հեղինակ Թ. Հոբսի համար մարդու գոյությունն արձանագրվում էր այնժամ, երբ վերջինս ներկայանում է՝ բախման հետ «ձեռք ձեռքի բռնած»: Մարդը գոյություն ունի, երբ նա բախման մեջ է, և հակառակը, եթե կա բախում, ուրեմն դրան ներ-

---

[3] Խոսույթի տեսակավորման հիմքերի ու տարատեսակների մասին տե՛ս Карасик В. И. О типах дискурса // Языковая личность: институциональный и персональный дискурс: Сб. науч. тр. — Волгоград: Перемена, 2000, էջք 5-20:

[4] Սովորաբար այս սկզբունքի առաջքաշման հեղինակի դերում թեմատիկ գրականության մեջ շրջանառվում է Թ. Հոբսի անունը (տե՛ս Гоббс Т. Основы философии. Часть третья: «О гражданине». Сочинения в двух томах. Т. 1./Пер.ц лат. и англ.; Сост., ред. изд., авт. вступ. ст. и примеч. В. В. Соколов, М., Мысль, 1989, էջ 271), սակայն այս միտքն առաջին անգամ հանդիպել է անտիկ հռոմեացի կատակերգու Տիտուս Պլավտուսի «Ասինարիա» ստեղծագործության մեջ (տե՛ս Titus Maccius Plautus; Henry Thomas Riley, translator (1852). The Comedies of Plautus, Vol. I. London: Henry G. Bohn. Retrieved 2 July 2015, էջ 502, էլ. աղբյուր՝ https://books.google.am/books?id=dwUwAQAAMAAJ&pg=PA502#v=onepage&q=%22A%20man%20is%20a%20wolf%20rather%20than%20a%20man%20to%20another%20man&f=false, դիմելու ամսաթիվ՝ 06.09.2020:

գրավված է մարդը: Հիմնական բնական օրենքի[5] ու դրան հաջորդող տասնյակից ավել սկզբունքներով կազմավորված փիլիսոփայական այս հարթակում վեր է հանվում այն, թե ինչպես կարող է զարգանալ, կամ ինչ «ճակատագիր» կարող է բաժին հասնել բախմանը, եթե դրա նախատիպը դիտարկվի բոլոր մարդկանց համար ծագումից ի վեր տրված հավասար իրավունքներով օժտվածության շրջանակներում:

Նկատենք, սակայն, որ մեր դիտարկմամբ այս տեսաբանի կողմից առաջադրված բնական օրենքը տրամաբանական հակասություն է պարունակում: Բնական օրենքի նկատմամբ հետևողականությունը մարդուն մղում է դեպի խաղաղ ապրելակերպ, սակայն խաղաղության հաստատման հիմքը դառնում է հնարավոր պատերազմին/բախմանը ներգրավվելու պատրաստակամությունը: Ինչպե՞ս է պատսպարված բախումը նախահասարակական վիճակում. փորձենք ըմբռնել:

Այսպես՝ բնական վիճակում՝ ապրիորի, մարդկանց տրված են միևնույն ունակությունները, և դա վերաբերում է երկու՝ կենսաբանական (բնախոսական) ու մտավոր տիրույթներին: Պետք է ի նկատի առնել, որ խոսքը վերաբերում է ոչ միայն դրանց ներդրվածությանն առհասարակ, այլև ծավալին կամ չափին: Առաջին հայացքից ակնհայտ սխալ այս դրույթի մեջ առկա թերությունները քողարկվում են անհրաժեշտաբար մարմնապես թույլ մարդու կողմից զարտուղի ճանապարհներով «իրեն ուժեղացնելու» հնարի կիրառմամբ՝ դիմելով այլոց օգնությանն ու համատեղ լուծելով *բախման առարկա դարձած թեման կամ անձին*[6]: Մարդկանց էության քննու-

---

[5] Հոբսյան հիմնական բնական օրենքը բաղկացած է երկու մասից: Դրա սահմանման մեջ մի կողմից՝ ենթադրվում է յուրաքանչյուր մարդու համար իր դրացիների հետ խաղաղության պայմաններում ապրելու ճանապարհների հայտնաբերումը, իսկ մյուս կողմից՝ սեփական անձը վտանգներից հեռու պահելու իրավունքի մշտական կիրառությունը՝ անկախ ամեն ինչից: տե՛ս Гоббс Т., Сочинения в 2х томах, Т. 2, էջ 99:

[6] Տե՛ս Гоббс Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского / Сочинения в 2х томах, Т. 2, Пер. А. Гутермана, Москва, Издательство «Мысль», 1991, էջ 92-95:

թյան ոլորտում, թվում է, շեշտադրում է կատարվում իրավական առումով բոլոր մարդկանց համար հավասարապես ձգտելու, ցանկանալու, նպատակադրվելու ու տիրանալու հնարավորության ընձեռման վրա: Եվ քանի որ ապրելու համար անհրաժեշտ կենսաբանական ու մտահայեցողական ներուժով մարդիկ միմյանց նկատմամբ առավելություն չունեն, դրանից բխեցվում է նաև նույն նպատակին հասնելու համար հույսի նույնական չափը[7]:

Եթե բնախոսական տվյալների միջոցով մարդուն վերագրված հատկությունը մարմնական ուժն է, ապա մտավոր ունակության՝ խելքի առհավատչյան՝ խորամանկությունը կամ հնարամտությունը: Մարդկանց համատեղ գոյության նախաքաղաքական փուլում հավասար ունակություններ ունենալը նշանակում է հավասարաչափ ձգտում՝ ունենալու այն, ինչ կամենում ես: Քանի դեռ մարդիկ չեն առաջնորդվում երազելի իրի յուրացման մղմամբ, նրանք վստահում են միմյանց: Իսկ երբ նպատակադրվում են՝ ձեռք բերելու այն, ինչ կամենում են, վստահության զգացումը վերափոխվում է մեկը մյուսի նկատմամբ կասկածամտության, և յուրաքանչյուրն իր հերթին փորձում է բոլոր հնարավոր տարբերակներով, այդ թվում՝ «խորամանկության կամ ուժի կիրառմամբ տիրանալ բաղձալիին կամ պահպանել այն, քանի դեռ չի համոզվել, որ չկա իր համար վտանգ ներկայացնող մեկ այլ ավելի զորավոր ուժ»[8]: *Հենց այստեղ է, որ ի հայտ է գալիս բախումը/հակամար-*

---

[7] Այս առթիվ պետք է նշել, որ նշյալ մտածողը ելնում էր անգամ մարդկանց կողմից լայն իմաստով աշխարհաճանաչողության բնագավառում հավասարապես ներդրվող խանդավառության՝ հետաքրքրության նույնաչափությունից: Այս տրամաբանությամբ ստացվում է, որ մարդիկ ստեղծված են միատեսակ, իսկ դրա հիմքում, ըստ ամենայնի, հեղինակի կողմից Աստծու արարչագործական կերպարի անուղղակի շեշտադրումն է: Տե՛ս Гоббс Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского / Сочинения в 2х томах, Т. 2, Пер. А. Гутермана, Москва, Издательство «Мысль», 1991, էջք 94-100:

[8] Гоббс Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского / Сочинения в 2х томах, Т. 2, Пер. А. Гутермана, Москва, Издательство «Мысль», 1991, էջ 94:

տությունը կամ պատերազմը, որում կողմերից մեկն անպայման հաղթում է՝ պարտության մատնելով մյուսին[9]:

Ընդհանրապես հանրային բարօրությանը նպաստող կամայական նախագիծ պայմանների վերափոխման պարագայում ի զօրու է՝ դառնալու հասարակական կարգի օրինակ, ու այս շարքին կարող ենք դասել Ժ. Ժ. Ռուսոյի քաղաքացիական հասարակության կազմավորման չափազանց իդեալիստական և, ըստ այդմ, ուտոպիական պատկերացումները, ինչպես նաև Ջ. Լոկի՝ հանրային բախմանը վերաբերող տեսությունը: Ի դեպ, Ռ. Շպեխտը, լինելով Ջ. Լոկի տեսության ուշիմ վերլուծաբանը, բնական իրավիճակի վերաբերյալ նրա նկատառումները համարում էր ավելի ընդունելի, քան Թ. Հոբսինը[10]: Համաձայնելով հոբսյան տեսության հենքը հանդիսացող մարդկանց՝ բնությունից տրված իրավունքների առկայության գաղափարի հետ՝ Ջ. Լոկը փոխում է բնական վիճակով պայմանավորված մարդկային հատկանիշների «ծանրության կենտրոնը»՝ որպես առանցք ներկայացնելով աստվածային բարեհաճությամբ մարդկանց տրամադրված բացարձակ անկախությունը[11]: *Այս համատեքստում տեսաբանը գործառնվող անհավասարության արմատները տեսնում է հասարակական կարգի պահպանումն իրականացնելու համար հետագայում կազմավորվելիք պետական ապարատի գործառնության մեջ*: Այսինքն՝ Ջ. Լոկի փիլիսոփայական համակարգում բախումները ծագում են պետության կազմավորումից հետո ու դրա գործառնության թերի դրսևորումների վրա: Բանական էակի ծագումնաբանական այս տրամաբանության մեջ բացառվում են մարդու՝ բախումնային ենթատեքստ ունեցող նկրտումները, իսկ շեշտը դրվում է բոլորի՝ ծնված օրվանից իրար նկատմամբ սիրառատ լինելու վրա: Հիմքում ունենալով այս վերջին միտքը իրավունքների լիակատար «միանմանության» մասին՝ միաժամանակ յուրաքանչյուր ոք իրավասու է սաստելու դիմացի-

---

[9] Նկատենք, որ Թ. Հոբսի մոտ այս երեք եզրույթները շատ հաճախ բովանդակապես համընկնում են:

[10] Տե՛ս Specht R., John Lock. München: Verlag C. H. Beck, 2007, էջ 179:

[11] Տե՛ս Локк Дж. Два трактата о правлении // Локк Дж. Соч.: в 3 т. М.: Мысль, 1988. Т. 3., էջ 263:

նին, եթե նրա վարքագծում նկատելի են դառնում գերիշխանության ու գերակայության տարրերը, որոնք վնասում են մեկ այլ մարդու՝ ոտնահարելով վերջինիս՝ բնությունից տրված իրավունքները: Փաստորեն, խաղաղության հաստատման ու դրա պահպանման առաքելությունը վերապահված է ամեն մեկին: Եվ հետևապես մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է ստանձնել «բնության սանիտարի» դերը: Բնական վիճակում հավասար ու անկախ լինելու փաստը բնության օրենքն է, որի կատարմանը պիտի ուշադիր լինի ամեն մեկը, իսկ հակառակ դեպքում անպայման արձագանքի[12]:

Բնության օրենք խախտող անձին պետք է մատուցել «չարը», այսինքն՝ պատիժը դիտարկել որպես հատուցման ու դրանից բխող իմաստության ի հայտ գալու նպատակ: Բայց քանի որ ոչ բոլոր մարդիկ կարող են ճանաչել «չափն» այլ անձին *պատժելու հարցում, առավել խելամիտ ու հասարակական համաձայնության արդյունք կարող է լինել պետական ղեկավարումը*: Բնական վիճակի պահպանմանը միտված կարգուկանոնի հաստատումը հավանականորեն կարող է ներփակել անարդարության դրսևորումներ, հատկապես, երբ անձը «դատավոր» է կարգվում ինքն իր համար: Եվ ահա այստեղ է, ամենայն հավանականությամբ, բեկումնային պահը բախումների ծագման հասարակական հիմնավորման համար: Սկզբունքորեն հնարավոր համարելով հասարակական համաձայնագրի հիման վրա ձևավորված պետության մասին գաղափարի իրատեսականությունը՝ Ջ. Լոկն ընդարձակում է այդ հաստատությանը վերապահված խորքային բովանդակությունը՝ միանշանակ կարծելով, որ բոլոր մարդիկ ունեն մեկմեկու հետ շփվելու կարիք, ինչը, ի թիվս վերոնշյալ ու այլ պատճառների, խթանել է, որպեսզի «....նրանք կամովին ընդգրկվեն այս կամ այն քաղաքական հասարակության մեջ»[13]:

Մինչև հիմա ներկայացված վերլուծությունը մարդկանց կենսաբանական բնութագրիչների մասին հետապնդում էր մեկ նպա-

---

[12] Տես Локк Дж. Два трактата о правлении // Локк Дж. Соч.: в 3 т. М.: Мысль, 1988. Т. 3., էջ 266:

[13] Локк Дж. Сочинения в трех томах. Том 3, Москва, Издательство «Мысль», 1988, էջ 270:

տակ, այն է՝ ընդգծել, որ նրանք բնատուր որակներով որևէ առավելություն չունեն մեկը մյուսի նկատմամբ: Գոյություն չունի ի ծնե տաղանդավոր, շնորհաշատ ու անտաղանդ մարդ: Այդ առումով մարդիկ ոչ այնքան տարբերվում են միմյանցից, որքան նմանվում միմյանց նկատմամբ իշխելու ու վնասելու, ինչպես նաև ագահության բավարարման և անսահմանափակ ազատության ձգտման զգացումներով: Կարող ենք եզրակացնել, որ բնական վիճակում մարդն իր դիմացը կանգնած մարդուն ճանաչելու խնդիր չունի. *ճանաչելով իրեն՝ նա ճանաչում է բոլորին*:

Բախումնային հակամարտության մեջ մարդու եսակենտրոն էության արձանագրումը շեշտադրվում է նաև մեկ այլ՝ «բոլորի պատերազմը բոլորի դեմ»[14] բանաձևով: Ֆուտուրիստ Ժակ Ֆրեսկոն հետազոտվող խնդրին մոտենում էր թերևս նույն դիտակետից՝ պնդելով, թե «մարդկանց մեջ բախումները ծագում են այն պահին, երբ մեկը սկսում է մյուսին խորհուրդ տալ»[15]: Ասել կուզեր, թե յուրաքանչյուրիս առավել մոտ են ու հարազատ, հետևաբար ավելի ընդունելի մեր անձնային գաղափարները, այս կամ այն հարցի, խնդրի վերաբերյալ ունեցած սեփական պատկերացումները ու շատ հաճախ «իմն է միակ ճշմարիտ միտքը» վտանգավոր, բայց գրեթե բոլոր մարդկանց բնորոշ սկզբունքի նկատմամբ համակրանքի առկայությունը:

Այսպիսով՝ բնությունից տրված մարդկանց համընդհանուր հավասարության մասին դրույթը կարող ենք համարել բախումնաստեղծ խոսույթի առաջացման թաքնված նախադրյալներից մեկը: Փաստորեն, եթե մենք բոլորս բնության կողմից հայտարարվել ենք իրար հավասար, ապա որևէ մեկի կողմից դրա խախտումը տեսականորեն կարող է դիտարկվել որպես ուրիշի իրավունքների նկատմամբ ոտնձգություն: Կյանքում դրան ի պատասխան տրվող, սաստող գործիքակազմի կիրառությունն իրեն երկար սպասել չի

---

[14] Гоббс Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского. / Сочинения в 2х томах, Т.2, Пер. А. Гутермана, Москва, Издательство «Мысль», 1991, էջ 95:

[15] Фреско Ж., Разрешение конфликтов: Видео-лекция, эл. ресурс/ https://designing-the-future.org/lectures-jacque-fresco/, դիմելու ամսաթիվ՝ 13.05.2020:

տալիս. բնատուր հավասարության «պահապանները» մտնում են տվյալ մարդու հետ անառողջ պայքարի դաշտ: Իսկ դրան հաջորդում է ուժի անարդար կիրառությունը, ինչպես նաև պահանջածի անարդար չափի ձեռքբերման մղումը:

Բացի վերոգրյալ անդրադարձից՝ բախումնային խոսույթի կայացման բնաշրջությունը պարունակում է նաև դրա սրման այնպիսի մի ուժգնության շեշտադրում, որի դեպքում բախումը շրջանառվում է «թշնամանք» ու «պատերազմ» եզրույթների հետ: Մեծ մասամբ խոսքը վերաբերել է դեպի իշխանություն ձգտման ու բախումների ծագման ուղիղ համեմատականի ուրվագծմանը: Հանրային հակամարտության, բախման սրման պարագայում անհրաժեշտություն է ծագում տարաբաժանում կատարել մի դեպքում՝ մարդկանց միջև ծագող բախում-թշնամանքի, մյուս դեպքում՝ բախում-պատերազմի միջև (ինչպես կարելի է կռահել, երկրորդ տեսակը հակամարտության առավել ծայրահեղ դրսևորումն է): Միջանձնային ու հասարակական հարաբերություններում մարդուն «zoon politikon» անվանող Արիստոտելը պատերազմը ներկայացնում է որպես «....սեփականության ձեռքբերման եղանակ.... պետք է որս կատարել թե՛ վայրի կենդանիների, թե՛ մարդկանց նկատմամբ, որոնք, բնութենապես կոչված լինելով ենթարկվելու, չեն կամենում անել դա. այդօրինակ պատերազմն արդար է»[16]: Առերևույթ է, որ բախման բնույթի՝ իմաստային այս տարաբաժանքը պարունակում է նույնը՝ իշխանության հաստատումը, և այս առումով ամենևին նշանակություն չունի, թե բախման հրահրիչն ինչ հավակնություններ ունի իր հակառակորդի մտավոր կամ ֆիզիկական ազատության տիրապետման նկատմամբ: Եթե անգամ ենթադրաբար ընդունենք, որ մարդը սկզբից ևեթ բարեկամական ու ընկերասիրական տրամադրվածություն ունի այլոց հանդեպ, իր գոյության ընթացքում նրա հետ մշտապես ապրում է բախումը, այն է՝ «իշխանության ձգտում – ազատության խլում – պատերազմի հրահրում» բանաձևը: Ի վերջո, դժվար է երևակայել

[16] Аристотель, Политика: в Сочинения в 4х томах, Том 4, Перев. и ред. А. И. Доватура, Москва, Издательство «Мысль», 1983, էջ 389:

մի իրավիճակ, երբ որևէ մեկն ինքնակամ կարող է զիջել դիմացինին իր ազատությունը: Երբ այդ իշխանական մղումը դառնում է անկառավարելի, «....անձը դրանով իսկ ներգրավում է իրեն պատերազմական իրավիճակ...»[17]. ահա բախման փիլիսոփայության համառոտ պատկերը: Մարդկանց՝ իշխանամետ հաղորդակցության մասին այսօրինակ դիտարկումները փիլիսոփայական հարթակում, իհարկե, համարվում են առավել կտրուկ: Կարելի է արձանագրել, որ բախման այս երկու բնութագրումները համահարթեցնում են խոսույթի քննարկվող տեսակը՝ այն զրկելով որևէ դրական երանգավորումից ու կառուցողական նշանակությունից: Այս ամենով հանդերձ՝ հարկ է շեշտել, որ բախման գաղափարն ինքն իրենով միշտ չէ, որ ենթադրում է հակամարտության մեջ գտնվելու մշտականություն: Սակայն նկատենք, որ բախումնային պայքար ներառվելու նպատակային մղվածությունն ու հոգեբանական տրամադրվածությունն արդեն իսկ դիտարկվում են իբրև բախումնային իրավիճակ, և միայն դրանց իսպառ բացակայությունն է խոսում խաղաղ համագոյակցման մասին:

Բախումնային խոսույթի զարգացման ու լուծման ուղիների առաջին դրսևորումները

«Մարդը ծնվում է ազատ, սակայն ամենուր ինքը կապանքների մեջ է»[18], և որպեսզի մարդ հնարավորություն ունենա, ապրելով ուրիշների հետ, մնալու իր բնությանը հավատարիմ ու միաժամանակ իրեն համարի «համընդհանուր կամքի» ենթական ու ամբողջի անբաժան մասը[19], հարկավոր է փորձ կատարել՝ բացորոշելու, թե որոնք են այդ կապանքներից հաճախադեպ, որոնք են բախման

---

[17] Локк Дж. Сочинения в трех томах. Том 3, Москва, Издательство «Мысль», 1988, էջ 271:

[18] Руссо Ж. Ж., Об общественном договоре или Принципы политического права, Москва, Государственное социально-экономическое издательство (Соцэкгиз), 1938, էջ 3:

[19] Տե՛ս Руссо Ж. Ж., Об общественном договоре или Принципы политического права, Москва, Государственное социально-экономическое издательство (Соцэкгиз), 1938, էջ13:

զարգացման հեռանկարները՝ ըստ լուծման ուղիների: Ինչպիսի՞ հեռանկարներ են բացվել այս առնչությամբ:

Բնութենապես բախումից առաջ ու բախումից հետո առկա է ուժի, հնարավորությունների բացահայտում, այսպես կոչված, «էներգիայի փոխանակում»: Հայտնի փաստ է, որ որքան մեծ է պարտության գինը, այնքան մեծ է բախման մեջ մարդու ներգրավվածության չափը: Այս իմաստով բախման մասնակիցների վարքագծային աշխուժության կամ, որ նույնն է, բախման լարվածության չափանիշը կարող է հիմք ծառայել մի բախումը մյուսից տարբերակելու համար: Լարվածության գաղափարը որոշ դեպքերում թույլատրելի է անգամ նույնականացնել բախման նպատակի կամ բախմանն առնչվող ոչ ակներև դրդապատճառի հետ: Բախման ընթացքում կիրառվող ջանքերն ու եռանդը որակական բնութագիր են հաղորդում ընթացող հակասությանը և այդ առումով դառնում տարբերակիչ չափանիշ դրա մեկնաբանության համար[20]:

Նկատենք, որ բախման լուծման եղանակների բազմազանությամբ աչքի են ընկել դեռևս նախնադարյան հասարակությունները, որոնցում իբրև հնարքներ գործի են դրվել են զրուցակցային, մարզական, մրցակցային մեթոդները: Դրանցում մարդկանց գոյապահպանության մեխանիզմը ենթադրել է այն կազմակերպելու խմբային ձևաչափը: Հնագույն հանրույթներին պատկանելության ապրումն ուղեկցվում էր մարդու՝ տվյալ կազմավորման հետ իր նույնականացմամբ, որն էլ իր հերթին փաստվում էր այնպիսի հատկանիշների ընդհանրականությամբ, ինչպիսիք են լեզուն, հավատքը, տարածքը և այլն[21]: Համատեղ գործունեություն ծավալելով ու դրանով իսկ ամրապնդելով ինքնանույնականանումը հանրույթի հետ՝ տոհմային համակեցության յուրաքանչյուր անդամ հարաբերվում էր բարու, այսինքն՝ հարազատի, յուրայինի, իսկ

[20] Տե՛ս Дарендорф Р. Элементы теории социального конфликта. Перевод с немецкого В. М. Степаненковой. СОЦИС, No 5, 1994, էջ 143:

[21] Տե՛ս Хотинец В. Ю. О содержании и соотношении понятий этническая самоидентификация и самосознание. Социологические Исследования. М., «Импакт-фактор», 1999 N 9, էջ 68-70:

դրանից դուրս գտնվողը՝ օտարի, նույնն է թե չարի հետ[22]: Անկախ նրանից, թե որքանով էր սուր հանրույթի ներսում ծագած հակասությունը կամ դրա առաջացման վտանգի իրատեսականությունը, նման համայքների մտակեցվածքում երբևէ տեղ չէր գտնում իրարից հեռանալու ու միմյանց մերժելու տարբերակը: Որպես կանոն ծագած խնդրի լուծման միտվածությամբ ներառվում էր երրորդ՝ չեզոք անձը, որը դառնում էր օբյեկտիվության ապահովման ու արդարության հաստատման խորհրդանիշ: Մեկ այլ պարագայում դատավորի դերակատարությունը ստանձնում էր ամբողջ հանրույթը: Որոշումը համարվում էր կայացված անդամների ձայների մեծամասնության կողմից: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում մրցապայքարի ու բառախաղի կիրառությունը՝ իբրև բախման հաղթահարման գործուն եղանակ: «Էսկիմոսների «մենամարտում».... մրցակիցները միմյանց հարվածում էին գլուխներով: Առավել հետաքրքիր է էսկիմոսների «բառերի» մրցույթը կամ «սրամտությունը» և երգերի մենամարտը»[23]: Նշենք, որ *տոհմացեղային, ընկերային հանրույթներում մարդիկ երգելու միջոցով միմյանց հետ մրցելու փորձառությունը կենսագործում էին միայն բախումների ժամանակ ու դրանք իսպառ վերացնելու նպատակով*:

Պատմությունը թույլ չի տա վրիպել. ժամանակակից հասարակությունների նախատիպ համարվող տոհմացեղային համայնքներում երբեմն նաև դիմել են առավել ծայրահեղ քայլերի. մարմնական փոխադարձ վնասումը՝ ընդհուպ մինչև սպանություն, համարվել է փոխհարաբերությունների կարգավորման, այդ թվում՝ բախման ելքի պարզման հաճախ կիրառվող զենքերից մեկը: Իսկապես, պատմության զարգացման բնականոնության ընթացքը դիտարկում է թե՛ կենդանական, թե՛ բանական փոխազդեցության կաղապարներ, երբ ավելի ուժեղ տեսակը ճնշում է գործադրում թույլի վրա, և ամենահարմար տարբերակի դեպքում՝ նաև վերաց-

---

[22] Տե՛ս Леви-Строс К. Первобытное мышление / Пер., вступ. ст. и прим. А. Б. Островского. — М.: Республика, էջ 244:

[23] Service E. R., 1966: The Hunters. Englewood Cliffs, New Jersey, 1966 (Prentice-Hall), էջ 55-56, դիմելու ամսաթիվ՝ 17.03.2020:

https://archive.org/details/hunters00serv/page/56/mode/2up/:

նում[24]: Հակառակ սրան՝ քաղաքակրթական «ներկայացման» միայն հետնորքարեդարյան ժամանակաշրջանում մարդկանց «ֆիզիկական վերացումը դառնում է առավելապես բացառություն կամ էլ առնվազն երկրորդային գործոն»[25]: Հավաքչությունը, ձկնորսությունը, այնուհետ նաև որսորդությունը գործունեության գլխավոր տեսակ ընդունող ցեղախմբերի անդամների համար այդօրինակ վարքագիծը տիպական էր ոչ միայն «արտաքին թշնամի» համարվող մրցակից տոհմերի, այլև սեփական՝ ներհանրութային հարաբերություններում: Սա վերաբերում է նախնադարյան համակեցության այն տեսակներին, որոնք առհասարակ աչքի չեն ընկել մշակութային պահուստով: Իսկ ահա քաղաքակրթական այս կամ այն մակարդակին հասած ազգերի մեջ բախումնային պայքարն իր մեջ ամփոփում է որոշակի շահի, մասնավորապես՝ տնտեսական շահի բավարարման հատկանիշ: Որպես այդպիսին ժամանակին ընկալվել են տարածքային ընդարձակման հավակնոտ նախաձեռնությունները, այլ ցեղերից նոր մարդկանց վերաբնակեցումը (նրանց գնելու կամ պարզապես «հաղթելու» իմաստով), ինչպես նաև նյութական անգամ աննշան օգուտի ստացումը:

Ինչպես կարելի էր նկատել վերը գրվածում, բախումնային հակամարտության վերացման օրինակի դերում հանդես է գալիս նաև քաղաքացիական հասարակության կայացումը[26], երբ իրադրային չափորոշիչ է սահմանվում անցումը բնատուր տրված «Ամեն ինչ կարելի է» կարգախոսից դեպի «Այն ամենը, ինչ պետք է, կունե-

---

[24] Տե՛ս Шарден Т. Феномен человека, М., 1987. Предисловие и комментарии Б. А. Старостина, Перевод с французского Н. А. Садовского, Москва: Наука, 1987, էջ 168:

[25] Անդ:

[26] Քաղաքացիական հասարակության վերաբերյալ փիլիսոփայական անդրադարձները բավականին շատ են: Այդ բազմազանության մեջ հատկապես արժեքավոր են Հ. Հովհաննիսյանի վերլուծությունները. տե՛ս Հովհաննիսյան Հ., Քաղաքացիական հասարակության գաղափարն ու մոդելները. զարգացման միտումները. թեր և դեմ փաստարկներ | «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2017 № 1 (22), էջք 3-13 // Ованисян О., Определение и классификация типов гражданского общества: предпочтения и перспективы развития. | Социокультурная евразийская интеграция: проблемы и перспективы, 2017, էջք 140-154:

նաս՝ ըստ բավարար չափաբաժնի» սկզբունքի: Գաղափարական դաշտում տեղ գտած այսօրինակ փոփոխությունը խորհրդանշում է պետության ստեղծումը, որը նախևառաջ ապահովում է ամեն մարդու գլխավոր՝ ապրելու իրավունքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդկանց միջև ծագող հակամարտությունները մշտական են, ինչպես, օրինակ, հիմնարար իրավունքի կենսագործմանն անմիջականորեն վերաբերող՝ սնվելու, կեցութավայր ունենալու պահանջները, պետության գոյավորումը դառնում է *գիտակցված անհրաժեշտություն*: Մարդիկ դառնում են հասարակական դաշինքի/պայմանագրի մաս, որում բացառվում է բախվող կողմերի միջև ուժի դերակատարմամբ խնդրի լուծման կամ դրա իսպառ վերացման տարբերակը: Իսկ այս նպատակին հասնելու իրատեսական ճանապարհներից մեկը կարող է լինել, օրինակ, պետական կառավարման ժողովրդավար սկզբունքներով գործառվող հանրապետական[27] կամ միապետական[28] ձևի հիմնումը: Վերջինիս կայացման ռազմավարության մեջ տեղորոշում ունի մարդկանց միջև առկա բացասական, ապակառուցողական զգացումը՝ վախը՝ որպես վարքի առաջնաշարժիչ. «....մարդկանց մեծաքանակ ու երկարատև կապերի ձևավորումը պայմանավորված է....մեկը մյուսի նկատմամբ ունեցած վախով»[29]: Պետական մակարդակում մարդկանց տրվում է այնքան ազատություն, որի պարագայում արդեն նրանք սկզբունքորեն անգամ չեն կարող ոտնձգություն կատարել միմյանց նկատմամբ՝ անկախ նրանից, թե հանրային տիրույթում կայացման ինչ քայլ է տվյալ անձը ձեռնարկել: Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա հասարակության փոքր ու մեծ շրջանակներում ծագող հակամարտությունների՝ բախումների միակ գլխավոր մեղավորն ու պատասխանատուն կարգվում է երկրի

---

[27] Տե՛ս Руссо Ж. Ж., Об общественном договоре или Принципы политического права, Москва, Государственное социально-экономическое издательство (Соцэкгиз), 1938, էջ 53-86:

[28] Տե՛ս Гоббс Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского. Пер. А. Гутермана Москва, Издательство «Мысль», 1991, էջ 144-154:

[29] Гоббс Т. Философские основания учения о гражданине. Минск: Харвест; М. : АСТ, 2001, էջ 26:

ղեկավարը կամ, հոբսյան տերմինաբանությամբ, «մահկանացու աստծվածը»[30]: Ինչ վերաբերում է իշխանության հաստատման որակական կողմին, այսինքն՝ խաղաղասիրական նկրտումներով բախումներից մեկնընդմիշտ ձերբազատվելու իրատեսականությանը, ապա այս դրվագում, մասնավորապես, Ռ. Դարենդորֆն ամենևին լավատես չէ. «Այն անձը, ով նպատակադրվել է ունենալ բախումներից զերծ հասարակություն, ստիպված կլինի հասնել դրան ահաբեկման ու ոստիկանական բռնության կիրառմամբ, քանզի այդ գաղափարն ինքն իրենով արդեն իսկ բռնության ակտ է մարդկային բնության նկատմամբ»[31]:

Բախումնային խոսույթի զոյավորման ու վերջինիս ունեցած ազդեցությունների վերաբերյալ տեսակետների բազմազանության և շատ դեպքերում նաև ծայրահեղ բևեռացվածության համածիրում «բախման ընդհանուր տեսությունը»[32] կարելի է դիտարկել որպես բոլոր ծայրահեղությունների հաշտության խորհրդանիշ դառնալու բավականին հաջող փորձ: Ելնելով բախումների զարգացման համակարգային ճանապարհի գոյության դիրքերից՝ առավել արդյունավետ է դառնում ոչ թե բախումներին որակական բնութագիր տալու վրա կենտրոնացումը կամ ոլորտային տարբերակումների հարցում խոր վերլուծություններ կատարելը, այլ դրանցից վերացարկման ճանապարհով բախումների կառավարումն ու հետևանքների կանխատեսումը թիրախավորելը[33]:

---

[30] Гоббс Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского. / Сочинения в 2х томах, Т. 2, Пер. А. Гутермана, Москва, Издательство «Мысль», 1991, էջ 315:

[31] Дарендорф Р. Тропы из утопии: Работы по теории и истории социологии / Р.Дарендорф; пер. с нем. Б. Скуратова, В. Близнекова. - М. : Праксис, 2002, էջ 374:

[32] Այս տեսության հեղինակը Քեննեթ Բոուլդինգն է. տե՛ս Boulding Kenneth E. Conflict and Defense. A general theory, Harper & Row Publishers, New York, Evanston and London, 1962. Digitized by the Internet Archive in 2013, էլ. աղբյուր՝ https://archive.org/details/conflictdefenseOOboul, դիմելու ամսաթիվ՝ 27.05.2020:

[33] Տե՛ս Boulding Kenneth E. Conflict and Defense. A general theory, Harper & Row Publishers, New York, Evanston and London, 1962.. Digitized by the Internet Archive in 2013, էջ 305-329, էլ. աղբյուր՝ https://archive.org/details/conflictdefenseOOboul, դիմելու ամսաթիվ՝ 27.05.2020:

Որպես վերջաբան

Ամփոփելով թեմայի էության վերհանման մասնակի դրսևորումը՝ թերևս կարող ենք շեշտել, որ բախումնային խոսույթը, ընդհանուր առմամբ, բովանդակում է հաղորդակցային վարքագծի և լեզվական գիտակցության վերհանումը, ինչպես նաև որոշակի նկարագրությունը: Բովանդակային նմանօրինակ կողմնորոշվածության պարագայում մեզ մի դեպքում՝ հետաքրքրեցին իրավաքաղական գիտակցության նախապատմության դրվագներում բախման կազմավորման ակունքները, մի այլ դեպքում՝ այն գործոնները, որոնք պայմանավորում են մասնակցի քիչ թե շատ ամբողջական վարվելակերպը բախման մեջ ու նրա ազդեցությունը՝ երկխոսության այլ մասնակիցների փոխհարաբերության վրա: Մի երրորդ դեպքում՝ ուշադրություն հրավիրվեց խոսույթի անմիջական մասնակիցների, նրանց կարգավիճակային-դերային բնութագիչների և հասարակության ներսում տեղի ունեցող տարաբնույթ գործընթացներից դրանց կախվածության վրա:

Ըստ էության, տարողունակությամբ բախումն այնպիսին է, ինչպիսին հենց կյանքն է. երկուսն էլ ենթադրում են փոփոխություն: Եվ այսու բախումնային կամ բախումնաստեղծ խոսույթն իմաստավորվում է հատկապես կյանքին նոր ազդակ, ուժ, եռանդ հաղորդելու հատկանիշների առաջմղմամբ:

Философское определение становления конфликтного дискурса и некоторые прототипы ее решения

Арутюнян Ани

Резюме

Ключевые слова: *столкновение, гражданское общество, естественное состояние, свобода, вражда, общественный договор, власть*

В контексте современных политических вызовов тема конфликтного дискурса стала очень актуальной. Наличие конфликтов очевидным образом стало обязательным для обществ, вовлеченных в процессы глобализации и стоящих на пути развития, а также для социумов, уже признанными в качестве сверхдержав.

Учитывая актуальность выявления проблемы, в статье анализируются генеалогические истоки формирования конфликтного дискурса, при этом четко выделяются философские идеи о том, что человеческая природа и социальная среда оказывают влияние друг на друга, а также создают друг друга и, по сути, эти процессы в экзистенциальном плане являются принудительными. Ведь рожденный под «покровительством» природы человек невольно носит на плечах некий социальный «рюкзак», в котором, помимо прочего, есть опция необходимости уживаться на одной территории с другими людьми. Исходя из этого, сосредоточив внимание на крайне поляризованных подходах философов данной области, было уделено внимание некоторым способам развития и разрешения конфликтного дискурса.

Был сделан вывод, согласно которому, человек, являющийся кредо социокультурного развития, постепенно приблизился к идее смирения постоянного присутствия конфликтного дискурса как нечто неизбежного. Ему не удастся избежать столкновения, корни которого уходят к истокам естественной эволюции, поэтому мы должны быть готовы к силе удара, который в некоторых случаях может быть слишком разрушительным.

Philosophical Definition of the Formation of a Conflict Discourse and Some Prototypes of Its Solution

Harutyunyan Ani

Summary

Key words: *collision, civil society, natural state, freedom, antagonism, public alliance, power*

In the context of the current political challenges, the topic of conflict discourse has become very urgent. The presence of conflicts has obviously become as an obligatory for societies involved in the processes of globalization and currently being on the path of development, as well the others already recognized as superpower-states.

Considering the stringency of revealing the problem, the article analyzes the genealogical origins of the conflict discourse formation; the philosophical ideas of the existential compulsion of human nature and social environment to influence, as well to create each other, are clearly outlined. After all, the human being born under the "patronage" of nature, involuntarily carries on his shoulders a social "backpack", which contains, among other features, the need to live in the same area with others. Therefore, by focusing on the extremely polarized approaches of the theorists in the philosophical domain, some ways of developing and resolving the conflict have been attentively outlined.

According to the conclusion, by bearing the stamp of socio-cultural development, we gradually approached the compulsion to take into account the conflict discourse. It's impossible to avoid the collision that befell us by natural evolution, therefore, we must be ready for the force of the blow, which in some cases can be destructive.

Ներկայացվել է 14.10.2020 թ.
Գրախոսվել է 17.11.2020 թ.
Ընդունվել է տպագրության 27.11.2020 թ.